

Նպատակ 3: Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից

Բոլորի համար՝ անկախ տարիքից, առողջ կյանքի ապահովումը և բարեկեցության խթանումը էական նշանակություն ունեն կայուն զարգացման համար: Չգալի առաջընթաց է արձանագրվել կյանքի սպասվող տևողությունը մեծացնելու և մոր ու մանկան մահացություն որոշ պատճառների կրճատման հարցում: Մեծ առաջընթաց կա մաքուր ջրի և սանիտարական պայմանների հասանելիության մեծացման, մալարիայով, տուբերկուլոզով, պոլիոմելիտով հիվանդացության, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի տարածման կրճատման ուղղությամբ: Այդուհանդերձ, շատ ավելի մեծ ջանքեր են անհրաժեշտ բազմաթիվ հիվանդությունների հիմնովին վերացման և առողջապահական վաղուց առկա և ի հայտ եկող խնդիրների հասցեագրման համար:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Պատվաստումների համար ծախսելով 1 մլրդ դոլար՝ ամեն տարի մենք կարող ենք փրկել 1 մլն երեխայի կյանք:

Ո՞րն Է նպատակը

Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից:

Ինչո՞ւ

Բոլորի համար առողջ կյանքի ապահովումը և բարեկեցության խթանումը՝ անկախ տարիքից, կարևոր նշանակություն ունի զարգացած հասարակությունների ձևավորման առումով:

Այնուամենայնիվ, չնայած վերջին տարիներին մարդկանց առողջության և բարեկեցության բարելավման հարցում զգալի առաջընթացին՝ առողջապահության հասանելիության հարցում առկա անհավասարությունները դեռևս գոյություն ունեն: Ամեն տարի դեռևս ավելի քան 6 մլն երեխա մահանում է մինչ հինգ տարեկան դառնալը, իսկ զարգացող տարածաշրջաններում կանանց միայն կեսի համար են հասանելի իրենց անհրաժեշտ առողջապահական ծառայությունները:

Համաճարակները, ինչպիսին է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ը, բարգավաճում են այնտեղ, որտեղ վախը և խտրականությունը սահմանափակում են մարդկանց՝ առողջ և արդյունավետ ապրելու համար անհրաժեշտ ծառայություններն ստանալու կարողությունը:

Առողջության և բարեկեցության հասանելիությունը մարդու իրավունք է, և այդ պատճառով Կայուն զարգացման օրակարգը նոր հնարավորություն է՝ ապահովելու, որ բոլոր մարդկանց, այլ ոչ թե միայն ամենահարուստների համար հասանելի լինեն առողջության և առողջապահության ամենաբարձր չափանիշները:

Ի՞նչ առաջընթաց ենք գրանցել մինչ օրս

Մեծ առաջընթաց է գրանցվել մի շարք ոլորտներում, այդ թվում՝ մոր և մանկան առողջության, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՅ, մալարիա և այլ հիվանդությունների հաղթահարման ասպարեզում:

1990 թ.-ից ի վեր մայրերի մահացության դեպքերը նվազել են մոտ 50%-ով, 2000 թ.-ից սկսած կարմրուկի պատվաստանյութերի միջոցով կանխվել է մոտ 15,6 մլն մահվան դեպք, և մինչ 2014 թ. վերջը 13,6 մլն մարդու համար հասանելի է դարձել հակառետրովիրուսային բուժումը:

Գուցե երկար ճանապարհ ենք անցել, բայց դեռ էլ ավելին պետք է անցնենք: Իրական առաջընթաց՝ նշանակում է հասնել առողջապահական-սանիտարական ծառայությունների համընդհանուր ընդգրկման, կենսական անհրաժեշտության դեղամիջոցների և պատվաստանյութերի հասանելիության, ապահովել, որ կանանց համար լիարժեքորեն հասանելի լինեն սեռական և վերարտադրողական առողջապահության ծառայությունները, և վերացնել կանխարգելիչ պատճառներով երեխաների մահվան դեպքերը:

Ի՞նչ կարժենա այս թիրախների իրականացումը

Բոլորի համար առողջ կյանքի ապահովումը պահանջում է հաստատուն հանձնառություն, սակայն օգուտները գերազանցում են ծախսը: Առողջ մարդիկ հարուստ տնտեսությունների հիմքն են:

Օրինակ՝ ծախսելով 1 մլրդ դոլար՝ գրիպի, թոքաբորբի և այլ կանխարգելիչ հիվանդությունների դեմ պատվաստումների ընդգրկումն ընդլայնելու նպատակով՝ ամեն տարի մենք կարող ենք փրկել 1 մլն երեխայի կյանք: Վերջին տասնամյակում առողջության և առողջապահության ոլորտում բարելավումները որոշ ամենաաղբատ երկրներում հանգեցրել են եկամտի 24 տոկոս աճի:

Անգործության գինն ավելի բարձր է. միլիոնավոր երեխաներ կշարունակեն մահանալ կանխարգելիչ հիվանդություններից, կանայք կմահանան հղիության և ծննդաբերության ընթացքում, իսկ առողջապահական ծախսերի պատճառով միլիոնավոր մարդիկ կշարունակեն ընկղմվել աղբատության մեջ: Միայն ոչ վարակիչ

հիվանդությունները միջին և ցածր եկամուտ ունեցող երկրների համար հաջորդ 15 տարում կարժեան ավելի քան 7 տրլն դոլար:

Ի՞նչ կարող եմ անել օգնելու համար

Սկզբի համար կարող ես խթանել և պաշտպանել քո և քեզ շրջապատող մարդկանց առողջությունը՝ կատարելով լավ տեղեկացված ընտրություններ, վարելով անվտանգ սեռական կյանք և պատվաստելով քո երեխաներին:

Կարող ես քո համայնքում բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը ամուր առողջության, առողջ ապրելակերպի կարևորության, ինչպես նաև բարձրորակ առողջապահական ծառայություններից օգտվելու մարդկանց իրավունքի մասին:

Դպրոցների, ակումբների, թիմերի և կազմակերպությունների միջոցով քայլեր ձեռնարկիր՝ խթանելու բոլորի և հատկապես ամենախոցելի մարդկանց՝ կանանց և երեխաների առողջությունը:

Դու կարող ես նաև քո կառավարությունից, տեղական առաջնորդներից և որոշում կայացնողներից պահանջել, որ հաշվետու լինեն իրենց հանձնառություններում՝ բարելավելու առողջ լինելու և առողջապահական ծառայություններից օգտվելու մարդկանց հնարավորությունը:

Կայուն զարգացման նպատակների և 3-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>